

# Կանաչ կլիմայի հիմնադրամի (GCF) Կանաչ տնտեսության ֆինանսավորման տարածաշրջանային ծրագիր(GEFF) – երկարացում

Վայր՝  
տարածաշրջանային

Ծրագրի համար:  
51247

Բիզնես ոլորտ՝  
Ֆինանսական հաստատություններ

Ծանուցման տեսակ՝  
Մասնավոր

Բնապահպանական դասակարգ՝  
FI

Թիրախային խորհրդի  
հաստ. ամսաթիվ՝

հուլիսի 24, 2019

Կարգավիճակ՝  
Հայեցակարգը վերանայված է

Ծրագրի ամփոփ  
փաստաթղթի (ՇԱՓ-PSD)  
հրապարակման ամսաթիվ՝  
հունիսի 20, 2019

## Ծրագրի նկարագրություն

Մինչև 400 մլն. ԱՄՆ դոլարի տրամադրում՝ GCF-GEFF տարածաշրջանային շրջանակային ծրագրին (Ծրագրի թիվ՝ 50223): Երկարացումը կներառի ևս 300 ԱՄՆ դոլարի տրամադրում Բանկի հիմնական ռեսուրսներից և մինչև 100 ԱՄՆ դոլարի տրամադրում Կանաչ կլիմայի հիմնադրամի կողմից, որը կբաշխվի Բանկի Կանաչ տնտեսության ֆինանսավորման ծրագրի կողմից Հայաստանում, Եգիպտոսում, Վրաստանում, Հորդանանում, Մոլդովայում, Մոնղոլիայում,

Մարոկկոյում, Սերբիայում, Տաջիկստանում և Թունիսում: Երկարացված ծրագիրը ֆինանսավորում կտրամադրի որակապես համապատասխան տեղական ֆինանսական հաստատություններին՝ իրավասու երկրներում մասնավոր հատվածին վարկավորելու նպատակով (բիզնեսներ, ահատներ, տնային տնտեսություններ, կլիմայի բարձրորակ տեխնոլոգիաների մատակարարներ և վաճառողներ)՝ կլիմայի փոփոխության մեղմացման և կլիմայի փոփոխության ադապտացման ներդրումների նպատակով, որպես աջակցություն Կանաչ տնտեսության անցմանը:

## Ծրագրի նպատակները

Ծրագրի երկարացումը կնպաստի կլիմայի փոփոխության մեղմացման և կլիմայի փոփոխության ադապտացման ֆինանսավորման նոր շուկաների ստեղծմանը և/կամ առկա շուկաների զգալի ընդլայնմանը: Այս կերպ, ծրագիրը կնպաստի Բանկի՝ դեպի կանաչ տնտեսություն անցումն ապահովելու մոտեցման ռազմավարական նպատակի իրականացմանը՝ հասանելի լինելով հատկապես ավելի փոքրածավալ նախագծերի համար, որոնց Բանկը չի կարող ուղղակիորեն աջակցել: Ծրագիրը նշանակալի աջակցություն կտրամադրի՝ օժանդակելով կլիմայի փոփոխության մեղմացման և ադապտացման ուղղվածությամբ ավելի քան 5000 ընդլայնելի և վերարտադրելի ծրագրերի ֆինանսավորմանը արդյունաբերական, առևտրային, բնակելի տարածքների, տրանսպորտի և գյուղատնտեսության ոլորտներում: Այն կանդրադառնա տեխնոլոգիաների մատակարարման շղթաների հետ կապված բազմաթիվ շուկայական խոչընդոտներին և կբացահայտի մասնավոր հատվածի ներդրումների համար առկա ներուժը:

## Անցումային ազդեցություն

GCF-GEFF տարածաշրջանային շրջանակի սահմաններում տրամադրվող երկրորդ ֆինանսավորումը կօգնի անցում կատարել դեպի էկոլոգիապես կայուն, ածխածնի արտանետումների ցածր մակարդակ ունեցող և կլիմայական փոփոխությունների ներքո կայուն տնտեսություններ ՎՋԵԲ-ի գործունեության երկրներից 10-ում՝ կանխելով այդ տնտեսությունների՝ ածխածնի ինտենսիվ արտանետումներով, կլիմայի փոփոխության նկատմամբ խոցելի և/կամ էկոլոգիային վնասակար և աղտոտող ուղիների մեջ շրջափակվելու վտանգը: Դա կիրականացվի՝ ֆինանսական միջնորդներին միջոցներ և գիտելիքներ տրամադրելով՝ բարձրորակ «կլիմայական» տեխնոլոգիաներ և լուծումներ ֆինանսավորելու նպատակով:

## Հաճախորդի մասին տեղեկություն

Վարկառու կհանդիսանան տեղական ֆինանսական հաստատությունները՝ իրավասու երկրներում գործող բանկերը, միկրոֆինանսական հաստատությունները, լիզինգային ընկերությունները և տեխնոլոգիաներ վաճառող ընկերությունները:

## ՎՋԵԲ-ի կողմից տրամադրվող ֆինանսավորում

300,000,000.00 ԱՄՆ դոլար

Կհամաֆինանսավորվի Կանաչ կլիմայի հիմնադրամի կողմից, մինչև 100,000,000 ԱՄՆ դոլար

## Շրագրի ընդհանուր արժեքը

300,000,000.00 ԱՄՆ դոլար

## Բնապահպանական և սոցիալական ազդեցության անվտանգության նկարագիր

Դասակարգվել է որպես FI (ESP 2014): Շրջանակի ներքո մասնակից բոլոր ֆինանսական հաստատությունները (ՄՖՀ) պետք է համապատասխանեն ՎՋԵԲ-ի՝ Կատարողականի նկատմամբ պահանջներ 2, 4 և 9-ին, ընդունեն և իրականացնեն ֆինանսական հաստատությունների համար ՎՋԵԲ-ի կողմից մշակված՝ Բնապահպանական և սոցիալական ռիսկերի կառավարման ընթացակարգերը: Այս շրջանակի ներքո ֆինանսավորվող շահառուները պետք է համապատասխանեն բնապահպանական, առողջապահական, անվտանգության և աշխատանքային ազգային ստանդարտների նկատմամբ պահանջներին, ինչպես նաև ԲՄ համապատասխանության չափորոշիչներին, որոնք կիրառվում են կլիմայի փոփոխության ազդեցության մեղմացման և ադապտացման ծրագրերի նկատմամբ, համաձայն քաղաքականության մասին հայտարարությանը: ՎՋԵԲ-ի կողմից ներգրավված Խորհրդատուն կհաստատի վերոգրյալը ՄՖՀ-ին: Բոլոր ՄՖՀ-երը պետք է Բանկին ներկայացնեն Բնապահպանական և սոցիալական տարեկան հաշվետվություններ ՖՀ կայունության ինդեքսի միջոցով, այդ թվում՝ հաշվետվություններ ենթաձևերի և դրանց՝ կլիմայի փոփոխության ազդեցության մեղմացման և ադապտացման տեսակետից օգուտների վերաբերյալ:

## Տեխնիկական համագործակցություն

Ծրագիրը կհամալրվի մոտավորապես 21 մլն ԱՄՆ դոլարի չափով ՏՀ փաթեթով՝ կարողությունների զարգացման, մարքեթինգի, նախագծի գնահատման և ընդհանուր մոնիթորինգի ու հաշվետվությունների պատրաստման համար: Միաժամանակ կիրականացվի նաև առանձին գենդերային բաղադրիչ, որը կնպաստի կանաչ վարկավորման պրոդուկտների մշակման և մարքեթինգի հետ կապված՝ առաջարկի և պահանջարկի գենդերային ասպեկտի հետ կապված խոչընդոտների վերացմանը:

## Բիզնես հնարավորություններ

Բիզնես հնարավորությունների կամ գնումների համար դիմեք պատվիրատու ընկերությանը:

Պետական ոլորտներում իրականացվող ծրագրերի համար այցելեք ՎՋԵԲ գնումների բաժին, հեռ.: +44 20 7338 6794 էլ. հասցե. <mailto:procurement@ebrd.com>

## Ընդհանուր հարցումներ

ՎՋԵԲ ծրագրի վերաբերյալ հարցումներ, որոնք կապված չեն գնումների հետ՝ հեռ. +44 20 7338 7168 էլ. հասցե. [projectenquiries@ebrd.com](mailto:projectenquiries@ebrd.com)

## Հանրային տեղեկատվական քաղաքականություն (ՀՏՔ-PIP)

ՀՏՔ-ն սահմանում է ՎՋԵԲ-ի կողմից տեղեկատվության տարածման և շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցելու կարգը, որպեսզի խթանի իր ռազմավարության, քաղաքականության և գործառնությունների վերաբերյալ արդյունավետ իրազեկումը և ըմբռնումը: Խնդրում ենք այցելել ստորև տեղակայված Հանրային տեղեկատվության քաղաքականության էջ՝ պարզելու, թե ինչպես կարող եք ստանալ Հանրային ոլորտի խորհրդի զեկույց

[ՀՏՔ-ի սեքսոր](#)

## Ծրագրի բողոքարկման մեխանիզմ (ԾԲՄ-PCM)

[Ծրագրի բողոքարկման մեխանիզմը](#) (ԾԲՄ-PCM) ՎՋԵԲ-ի հաշվետվողականության մեխանիզմն է: Այն հնարավորություն է ընձեռում ՎՋԵԲ-ի կողմից ֆինանսավորված ծրագրերի վերաբերյալ անհատների

կամ կազմակերպությունների կողմից ստացված բողոքների անկախ վերանայման համար, որոնք ենթադրաբար առաջացրել են կամ հավանական է, որ կպատճառեն բնապահպանական և/կամ սոցիալական վնաս:

Խնդրում ենք այցելել [Օրագրի բողոքարկման մեխանիզմ](#) էջը՝ պարզելու, թե ինչպես ներկայացնել զանգատ: ԾԲՄ աշխատակիցը ([pcm@ebrd.com](mailto:pcm@ebrd.com)) պատրաստ է պատասխանելու ցանկացած հարցի, որ կարող եք ունենալ զանգատի ներկայացման, ինչպես նաև գրանցման ու իրավասության չափանիշների վերաբերյալ՝ [ԾԲՄ կանոններին ու ընթացակարգին](#) համապատասխան: